

**VIII. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ
ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ**

8.1. Արտաքին հարաբերությունների ոլորտ

8.1.1. Մշակման և իրականացման ձևաչափը

Արտաքին հարաբերությունների ոլորտում Ռազմավարական հայեցակարգը մշակվում և իրականացվում է համաշխարհային և տարածաշրջանային հարթություններում: Այն միտված է Ռազմավարական հայեցակարգի՝ ներպետական ու համազգային մակարդակներում մշակվող և իրականացվող համապատասխան ուղղությունների հետ միասին ապահովելու հայության նպատակների իրագործումը:

8.1.2. Ռազմավարական հայեցակարգի ելակետերը համաշխարհային հարթությունում

8.1.2.1. Համաշխարհայնացմամբ ձևավորվող իրավիճակը գնալով ավելի է նմանվում համակարգային ճգնաժամի վտանգ պարունակող տուրբուլենտության, որի մեջ արդեն նշմարվում է միջազգային հարաբերությունների նոր կարգի ուրվագիծը: Նման զարգացումը հանգեցնում է միջազգային հարաբերությունների հետվեստֆալյան հարացույցի վերանայման անհրաժեշտության:

8.1.2.2. Արտաքին հարաբերությունների ասպարեզում մեծանում է դերակատարների տեսակային բազմազանությունը և փոփոխվում դրանց գործելաձևը: Ավանդական դերակատարների՝ պետությունների և նրանց միավորումների հետ միասին զգալի, իսկ երբեմն՝ էական, դեր են սկսում կատարել տեղեկության ցանցերի վրա հիմնված ոչ ավանդական դերակատարները՝ տարատեսակ անդրազգային ցանցային միավորները: Զուգահեռաբար՝ նկատելի է նաև էթնիկ կամ կրոնական սկզբունքով ձևավորվող նոր պետությունների կամ պետական կազմավորումների առաջացման միտում:

8.1.2.3. Ընդամին՝ պետություններն ու դրանց միավորումներն հիմնականում իրենց հիերարխիկ կառուցվածքի, նվազ ճկունության և դինամիզմի, կապերի ու հարաբերությունների նվազ արդյունավետության պատճառով հաճախ չեն կարողանում կայացնել արագ և ճիշտ որոշումներ և/կամ արդյունավետ կերպով կատարել դրանք, ինչը էլ ավելի է մեծացնում ցանցային անդրազգային միավորների դերն ու նշանակությունը: Մակայն հարկավոր է նկատի ունենալ, որ միջազգային կյանքի ավանդական դերակատարները՝ պետությունները և նրանց միավորումները, դեռևս մնում են ասպարեզում որպես որոշիչ գործոններ: Գաղտնիք չէ նաև, որ պետությունները, որպես կառավարման համապիտանի գործառնության համակարգեր, մշտապես փոփոխվել են և ներկայումս էլ նրանց մի մասը արագ տեմպերով ու ծավալներով փոփոխվում են՝ հարմարվելով ցանցային դարաշրջանի հրամայականներին՝ կերպափոխվելով ըստ ցանցային տրամաբանության և ակտիվորեն համագործակցելով անդրազգային ցանցային միավորների հետ: Մեծ թվով այլ պետություններ, ընդհակառակը, չկարողանալով հարմարվել արդի աշխարհի փոփոխվող իրողություններին՝ իրենց

գործառույթները զիջում են տարատեսակ միգրացային դերակատարներին՝ դրա հետևանքով հայտնվելով նոր որակի գաղութային կախվածության իրավիճակում:

8.1.2.4. Մեծ թափով շարունակվում է աշխարհի քաղաքակրթական միօրինակացման և համահարթեցման գործընթացը՝ նպաստավոր միջավայր ստեղծելով մի քանի հզոր պետությունների և անդրազգային ցանցային միավորների կողմից ուրիշներին նորովի կառավարելու համար, դրանով իսկ մեծացնելով հետնապահի վիճակում հայտնված պետությունների ու ազգերի նոր որակի գաղութացման վտանգը: Նման միտումը կարող է անգամ հանգեցնել միասնական կանոններով գործող համաշխարհային նորգաղութային համակարգի ձևավորմանը: Միննույն ժամանակ՝ առաջանում է քաղաքակրթությունների ու մշակույթների երկխոսության և նրանց միջև արդյունավետ փոխանակումների լայն հնարավորություն, ինչի շնորհիվ փոքր և թույլ պետությունների ու այլ դերակատարների համար առաջանում են թռիչքային զարգացման նախադրյալներ: Այդ հիմքի վրա լայն հնարավորություն է առաջանում նաև համերաշխության և համագործակցության սկզբունքներով առաջնորդվող միջազգային հարաբերությունների նոր կարգի ձևավորման համար:

8.1.2.5. Բացի վերը նշվածից, ներկայիս համաշխարհային ճգնաժամի հիմնական առանձնահատկություններից են՝

- Սպառողական արժեհամակարգով վարակված մարդը, որ կառավարում է աշխարհը և որի հիմնական նպատակը առավելագույն շահույթ ստանալն է ու այդ շահույթը հաճույքների համար օգտագործելը: Այս պատճառով, ինչպես նաև սպառողական մարդու տեսակի տարածման հետևանքով անհամապատասխանություն է առաջացել մարդկային հնարավորությունների և մոլորակի ռեսուրսային հնարավորությունների միջև:

- Համաշխարհայինացած մշակութային-մեղիական բաղադրիչի առանցքայնացումը, ինչի հետևանքով գաղութացվում են մարդկանց և ազգերի գիտակցությունն ու կամքը, մոլումներն ու ցանկությունները, ինչը հանգեցնում է նրանց արժեհամակարգերի խաթարմանը և կեղծ բազմազանեցմանը:

- Մի կողմից՝ տեխնոլոգիական նորարարության աճող կարևորությունը, իսկ մյուս կողմից՝ նրա ծայրահեղ անհրավասարաչափ բաշխվածությունը և այդ պատճառով ավելի ու ավելի մեծացող խզվածքը կամրջելու անհրաժեշտությունը:

- Նորգաղութատիրությունը կարող է հանդես գալ բազմամետրոպոլիտյան, մետրոպոլիա-միջանկյալ կիսագաղութ-գաղութ շարակարգի (էշելոն) և ոչ ավանդական դերակատարների տարբեր աստիճանի մասնակցության առանձին կամ համակցված ձևերով:

8.1.2.6. Աշխարհաքաղաքական գործոնների և ուժերի մեծաքանակությունն ու բազմազանությունը, դրանց միջև պայքարի ուժգնությունն ու բարդությունը բազմապատիկ չափերով մեծացնում են փոքր դերակատարների՝ իրավիճակի վրա ազդելու և իրենց շահերն իրացնելու հնարավորություններն ու կարողությունները: Առաջին պլան են գալիս ու որոշիչ են դառնում ոչ թե նյութական, ռեսուրսային հզորությունը, այլ խելացի ուժը և կամքը, ինչի հետևանքով որոշակի իրավիճակներում չեզոքանում է տարբերությունը մեծ և փոքր դերակատարների միջև և երկուսն էլ կարևոր են դառնում աշխարհի ու տարածաշրջանի ապագան, այսօրվա ու վաղվա չափանիշները և խաղի կանոնները որոշելու հարցերում:

8.1.2.7. Հայության և Հայաստանի պարագայում խելացի ուժի և կամքի արդյունավետ գործադրման համար էական նպաստավոր պայման է հայության բնական ցանցային վիճակը, ուստի ցանցային տարբերակով հայության ներուժի համախմբումը, զարգացումը և կիրառումը կբազմապատկի հայկական գործոնի հնարավորություններն ու կարողությունները ինչպես համաշխարհային, այնպես էլ տարածաշրջանային հարթություններում:

8.1.3. Ռազմավարական հայեցակարգի էլակետերը տարածաշրջանային հարթությունում

8.1.3.1. Աշխարհաքաղաքական ուժերի շահերի կարևոր մասը կուտակվել է երեք՝ Միջերկրական, Սև և Կասպից ծովերի ավազաններն ընդգրկող լայնածավալ տարածաշրջանում, որի նկատմամբ վերահսկողությունը դառնում է շահերի իրացման բանալի և հնարավորություն:

8.1.3.2. Հայաստանի տարածքը քաղաքակրթական և աշխարհաքաղաքական առումներով այդ տարածաշրջանի առանցքային հանգույցներից մեկն է:

8.1.3.3. Մինևույն ժամանակ՝ տարածաշրջանում Հայաստանի և հայության ռազմավարական շահերի իրացումը և հարևան պետությունների հետ հարաբերությունների բնականոն զարգացումը էապես պայմանավորված են նաև հայ ժողովրդի բնօրրանի մեծ մասի հայաթափված լինելու ու իր Հայրենիքում վերստին համախմբվելու նրա իրավունքների ու շահերի իրացման լրջագույն պրոբլեմներով:

8.1.3.4. Մեծ Մերձավոր Արևելքի երկրներում տեղի ունեցող խորքային զարգացումները կարող են հանգեցնել ոչ միայն դրանց քաղաքական վարչակարգի և/կամ կառավարման կարգի, այլև սահմանների փոփոխության, անգամ՝ նոր պետությունների և/կամ պետականակերպ կազմավորումների առաջացման, որոշ պետությունների տրոհման և/կամ վերացման: Նման իրավիճակը կարող է էապես փոխել տարածաշրջանի անվտանգային ճարտարապետությունն ու միջավայրը:

8.1.3.5. Այդպիսի պայմաններում Հայաստանը, արդյունավետ կերպով օգտագործելով նաև հայության ցանցային հնարավորություններն ու կարողությունները, պետք է հանդես ազգային շահերի գերակայությամբ առաջնորդվող ճկուն ու դինամիկ ռազմավարությամբ: Նա, որպես մի կողմից ավանդաբար իրականացրած քաղաքակրթական խաչմերուկի ու կամրջի, ինչպես նաև տարածաշրջանային նորարարի դեր, իսկ մյուս կողմից՝ ներքին կայունության մեծ պաշար ունեցող երկիր, տարածաշրջանում ձևավորվող նոր անվտանգային միջավայրում հայկական գործոնի դերը հնարավորիս մեծացնելու միջոցով պետք է ոչ միայն ապահովի իր և տարածաշրջանի պետություններում բնակվող հայության անվտանգությունը հավանական սպառնալիքներից ու մարտահրավերներից, այլև իրավիճակի ընձեռած լայն հնարավորություններն առավելագույնս օգտագործի հայության ռազմավարական շահերի իրացման, այդ թվում՝ ցեղասպանության հետևանքների հաղթահարման, Հայրենիքում հայության համախմբման, հայրենի պետականության ամրապնդման ու զարգացման համար:

8.1.4. Նպատակները

Գլխավոր նպատակը

8.1.4.1. Հայաստանի՝ որպես ավանդական և ոչ ավանդական դերակատարների միջև կամրջող խաչմերուկի դերի նորովի վերաստանձնման, ինչպես նաև նրան արտաքին հարաբերությունների օբյեկտից ստեղծագործ սուբյեկտի վերածման ապահովում:

Մյուս նպատակը

8.1.4.2. Արտաքին հարաբերությունների ասպարեզում ցեղասպանության հետևանքների հաղթահարման, այդ թվում՝ հայ ժողովրդի պահանջատիրության բավարարման և նրա անօտարելի իրավունքների վերականգման ու իր Հայրենիքում նրա համախմբման ապահովում:

8.1.5. Խնդիրները

8.1.5.1. Արտաքին հարաբերությունների նոր կարգի մշակման գործում նախաձեռնողի, քարշակի ու հարթակի դերի ստանձնման ապահովում, ինչը, առաջին հերթին, ենթադրում է.

– հայության և Հայաստանի մասնագիտացում՝ որպես կենսակերպի նոր մոդելների գեներատորի և/կամ ներմուծողի, արտահանողի և տեղայնացնողի (ներառյալ՝ հոգևոր-բանական արդիական էթիկա ու ապրելակերպ, երկխոսող և համագործակցող քաղաքակրթություններ, կանաչ տնտեսություն, կրթական նոր միջավայրեր, վերականգնողական էներգետիկա, նորամուծական և տեղեկութային հասարակություն (այդ թվում՝ տեխնոլոգիական տրանսֆերի ապահովման, համացանցի կառավարման ու անվտանգության, նոոքաղաքական մարտահրավերների հաղթահարման ու հնարավորությունների օգտագործման ասպարեզներում),

– խելացի ուժի գեներացում և արդյունավետ կիրառում,

– ազգային ցանցային գործունեության գերակայությունների որոշում և դրա հիման վրա ազգային ցանցային առկա միավորների արդիականացում և նոր միավորների ստեղծում, ինչպես նաև Արևելաքրիստոնեական ցանցի հետ գործակցություն ու արդիականացում և դրա մեջ հայկական գործոնի դերի վերաստանձնում ու արդյունավետ կիրառում,

– անդրազգային ցանցային միավորների գնահատում, դասակարգում և մշտադիտարկում, ինչպես նաև դրանց հետ հարաբերվելու հարացույցների մշակում և իրագործում,

– Հայաստանի պետական կառավարման համակարգի արտաքին քաղաքական բաղադրիչի ցանցայնացում և արդյունավետ կառավարում:

8.1.5.2. Ներկայիս տեղեկութային-հաղորդակցային աշխարհի հնարավորությունների օգտագործմամբ Ցեղասպանության հետևանքով կորցրած միասնական, ամբողջական ազգային կյանքով մի յուրօրինակ Հայաստանում ապրելու և այն հոգևոր-մշակութային, քաղաքական ու տնտեսական առումներով օրեցօր կառուցելու ու հզորացնելու ապահովում:

8.1.5.3. Հայաստանի տարածքի՝ քաղաքակրթական խզվածքի վրա գտնվելու և աշխարհաքաղաքական ուժերի շահերի բախման կիզակետ լինելու հանգամանքների ընձեռած հնարավորությունների առավելագույնս օգտագործման ապահովում:

8.1.5.4. Հայության բնական ցանցային վիճակով պայմանավորված նրա միջնորդական կարողությունների ու հնարավորությունների համախմբման, զարգացման և կիրառման ապահովում:

8.1.5.5. Արտերկրաբնակ հայության երկու բաղադրիչների՝ հայկական և տվյալ երկրների բազմապիսի էությունների ու բնույթների համատեղ առկայության շնորհիվ միաժամանակ և «տանը» և «դրսում» լինելու երևույթի՝ որպես աշխարհի համար հայության կամրջող ու միավորող դերի և դրա միջոցով հայկական խորքային մշակույթի ու արժեքների հիման վրա բազմախոսության, հայության և ամբողջ աշխարհի համար ելքերի որոնման համապիտանի գործիքարանի ձևավորման, զարգացման ու կիրառման ապահովում:

8.1.5.6. Համազգային ծրագրերի մշակման և իրագործման, հայրենի պետության կարևոր խնդիրների լուծման հարցերում արտերկրում բնակվող հայության առավելագույն ներգրավման, նրա ազգային ինքնության պահպանման և ազգային ու մարդկային իրավունքների երաշխավորման քաղաքական-դիվանագիտական, պաշտպանական-անվտանգային, տնտեսական, իրավական, տեղեկությային-հաղորդակցային, գիտակրթական և հոգևոր-մշակութային ապահովում:

8.1.5.7. Արցախը Հայաստանին դե յուրե միացնելու միջոցով Արցախյան հակամարտության արդար և հայանպաստ լուծման միջազգային ճանաչման, ինչպես նաև այդպիսի լուծմամբ տարածաշրջանում լարվածության հնարավոր աճման նախականիսման ու չեզոքացման ապահովում:

8.1.5.8. Հայաստանի միջազգային վարկի բարձրացման, նրա թռիչքային զարգացման և քաղաքական, տնտեսական, տեղեկությային-հաղորդակցային ու մշակութային մրցունակության միջազգային բաղադրիչի ապահովում:

8.1.6. Սկզբունքները

8.1.6.1. Հայակենտրոնություն և Հայաստանակենտրոնություն:

8.1.6.2. Ազգային շահերի գերակայություն:

8.1.6.3. Համահայկականություն:

8.1.6.4. Նախաձեռնողականություն և նորարարություն:

8.1.6.5. Հավասարակշիռ բազմավեկտորություն:

8.1.6.6. Ցանցայնություն:

8.1.7. Իրականացման հիմնական ուղիները

8.1.7.1. Պետության ու ազգի համընդհանուր անվտանգային ներուժի և հզորության հարաճուն համախմբումն ու բազմապատկումը:

8.1.7.2. Այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ փոխշահավետ գործակցությունը:

8.1.7.3. Քաղաքակրթությունների և տարածաշրջանների միջև երկխոսության ու համագործակցության նախաձեռնումն ու ապահովումը:

8.1.7.4. Ազգային արժեհամակարգի և շահերի գերակայության հաշվառմամբ միջքաղաքակրթական ու միջտարածաշրջանային հարթություններում և անվտանգային միջավայրերում ավանդական (միջպետական) ու ոչ ավանդական (ցանցային) ինտեգրումը:

8.1.7.5. Ազգային ցանցային համակարգերի ձևավորումը, զարգացումը և գործադրումը, ինչպես նաև անդրազգային ցանցային համակարգերի հետ դրանց հարաբերությունների իրականացումը:

8.2. Հարաբերությունները միջազգային կազմակերպությունների, առաջատար և այլ պետությունների հետ

8.2.1. Միջազգային կազմակերպություններ

Միջազգային կազմակերպությունների հետ հարաբերություններում Հայաստանն իր ռազմավարությունը պետք է կառուցի ազգային նպատակների առաջնայնության ու գերակայության մեկնակետից՝ հատկապես ձեռնպահ մնալով վերպետական (բացառությամբ ՄԱԿ-ից) ու ռազմաքաղաքական միջազգային կազմակերպություններին անդամակցելուց:

Գոյություն ունեցող վերպետական միջազգային կազմակերպությունները, հատկապես համադաշնության սկզբունքով ձևավորվողները, ինչպես նաև ռազմաքաղաքական դաշինքները, ոչ միայն չեն նպաստում հայության և Հայաստանի սուբյեկտայնության ապահովմանը, հայաստանակենտրոն և հայակենտրոն քաղաքականության միջոցով նրանց նպատակների իրագործմանը, այլև համատեքստային հակասության մեջ են այս գերինդրի հետ:

Ուստի Հայաստանը միջազգային կազմակերպությունների հետ հարաբերություններում պետք է առաջնորդվի հայության նպատակների իրագործման, ազգային ինքնության, մշակույթի ու արժեքների, ինչպես նաև հայաստանակենտրոն արտաքին քաղաքականության սկզբունքի գերակայությամբ, իսկ միջազգային ֆինանսատնտեսական կազմակերպությունների և միությունների հետ հարաբերությունների մասով՝ նաև երկրի սոցիալ-տնտեսական գերակայությունների հաշվառմամբ՝ ըստ այդմ դադարեցնի իր անդամակցությունը ԱՊՀ-ին ու ՀԱՊԿ-ին, դադարեցնի իր մասնակցությունը Եվրասիական միության ձևավորման գործում, ինչպես նաև վերանայի Եվրոպական ինտեգրման քաղաքականությունը, ինչպես նաև վերանայի մինչ այդ իր կաղմից ստանձնած համապատասխան այլ միջազգային պարտավորությունները:

Միևնույն ժամանակ, Հայաստանը չպետք է խուսափի անհրաժեշտ ինտեգրումից, եթե դա հնարավոր է այդ կազմակերպությունների գործունեությանը դիտորդի, ասոցացված անդամի կամ ուղիղ պարտականություններ չնախատեսող որևէ այլ կարգավիճակով և/կամ դրանց առանձին ծրագրերին կամընտիր մասնակցությամբ:

Հայաստանը այս դիրքերից հետևողականորեն կձգտի արդյունավետ կերպով համագործակցել ՄԱԿ-ի, Եվրոպայի Խորհրդի և Եվրամիության, ԱՊՀ-ի, միջազգային ու տարածաշրջանային անվտանգությունն ապահովող համակարգերի՝ ՆԱՏՕ-ի, ԵԱՀԿ-ի և ՀԱՊԿ-ի, ինչպես նաև առկա և ձևավորվող այլ միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների հետ՝ առաջնություն տալով անվտանգության ու կայունության, մարդու իրավունքների պաշտպանության ու ժողովրդավարության ամրապնդման, մշակութային երկխոսության ու համագործակցության, տեղեկութա-հաղորդակցային զարգացման, սպառազինությունների վերահսկման, արդի սպառնալիքների դեմ պայքարի հարցերին:

8.2.2. Առաջատար պետություններ

8.2.2.1. Ռուսաստանի Դաշնություն

Ռուսաստանը միջազգային քաղաքականության հանգուցային գործոն է իր ահռելի տարածքի, աշխարհաքաղաքական դիրքի և աշխարհառազմավարական ներուժի ու ռեսուրսների շնորհիվ:

Ներկայումս Ռուսաստանի Դաշնության հետ Հայաստանի Հանրապետության հարաբերությունները դարձյալ ունեն ռազմավարական բնույթ և առանձնանում են Հայաստանի ազգային անվտանգության համակարգի ձևավորման ու գործառման հարցում իրենց ունեցած դերով ու նշանակությամբ:

Այդ հարաբերությունները ընդգրկում են երկու պետությունների համագործակցության բազմաթիվ ոլորտներ՝ համակարգվելով ավելի քան 160 երկկողմ միջազգային պայմանագրերով: Համագործակցության մասշտաբայնությունն առավել մեծ է ռազմական, առևտրատնտեսական, էներգետիկայի, գիտության, կրթության, մշակույթի, տեղեկատվության ոլորտներում: Վերջին շրջանում ակտիվանում և ընդլայնվում է նաև ռուսաստանյան կապիտալի ներհոսքը Հայաստան:

Հայ-ռուսական ռազմավարական համագործակցության համակարգում առանցքային դեր ունի ռազմական բնագավառը: Հայաստանը Ռուսաստանի հետ ռազմական համագործակցությունը և հատկապես Հայաստանի տարածքում ռուսաստանյան զորակայանի ներկայությունը դիտում է որպես արտաքին ռազմական սպառնալիքների չեզոքացման կարևոր գործոններից մեկը: Հայաստանի շահերի տեսանկյունից այդ համագործակցությունն ուղղված է հետևյալ հիմնարար խնդիրների լուծմանը.

- Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի ռազմական և ռազմատեխնիկական կարիքների ապահովում,

- տարածաշրջանում ուժերի հաշվեկշռի պահպանում:

Հայաստանում ՀՕՊ-ի բնագավառում հայ-ռուսական համատեղ հերթապահությունը էապես նպաստում է Հայաստանի Հանրապետության անվտանգության կարևորագույն խնդիրներից մեկի լուծմանը, իսկ հայ-ռուսական ռազմական դաշինքը նպաստում է տարածաշրջանում և առհասարակ՝ միջազգային հարաբերություններում ռազմաքաղաքական հավասարակշռության պահպանմանը:

Անցնող քսան տարիների ընթացքում հայ-ռուսական հարաբերությունների ձևաչափը պաշտոնապես հռչակված ռազմավարական գործընկերության փոխարեն ձևավորվել է որպես հայության և Հայաստանի կենսական շահերի հաշվին Ռուսաստանի շահերի իրացման նորգաղութային կախյալություն: Սակայն համակցված ու տուրբուլենտ արդի աշխարհի պայմաններում և Ռուսաստանի աշխարհաքաղաքական դերի նվազման հետևանքով այն չի մնացել երկկողմ հարաբերությունների սահմաններում և հետզհետե կերպափոխվելով՝ ներկայումս վերածվել է տարբեր աշխարհաքաղաքական ուժային կենտրոններից Հայաստանի նորգաղութային կախյալության բարդ և բազմապիսի ձևաչափի:

Ռուսաստանը դրա տարբեր հարթություններում ստանձնել է հիմնական կատարողի, միջնորդի կամ գործակցի դեր, իսկ հայաստանյան ապազգային ու ապապետական վարչախումբը, որն այս իրավիճակի գլխավոր մեղավորն է, վերածվել է այդ ձևաչափն սպասարկող գործիքի:

Միննույն ժամանակ՝ Ռուսաստանը մշտապես ձգտում է վերականգնել Հայաստանի նկատմամբ իր նախկին մենաշնորհը՝ որպես լուծում ընտրելով Հայաստանին իսպառ ընկճելու և որևէ

այլընտրանքից զրկելու ճանապարհը: Այդ նպատակով Ռուսաստանը կազմակերպում է հայաստանաբնակ հայության արտագաղթ դեպի իր տարածք, կիրառում է քաղաքական, տնտեսական, մշակութային և տեղեկութային ճնշման կոշտ լծակներ, Ադրբեջանին տրամադրում է ծանր սպառազինություն:

Այս պայմաններում Հայաստանը այնուամենայնիվ համարում է, որ Ռուսաստանը կարող է Հայաստանի համար իրապես լինել լուրջ դաշնակից և գործընկեր, եթե երկկողմ համաձայնությամբ գույքագրման ենթարկվեն, վերանայվեն, վերագնահատվեն և շահերի փոխադարձ հաշվառմամբ նորացվեն Հայաստանի ու Ռուսաստանի հարաբերությունները՝ դրանք բերելով նորմալ և բնականոն գործընկերային ձևաչափի:

Հայաստանի և Ռուսաստանի հարաբերությունների նորացումը առաջին հերթին պահանջում է վերանայել Հայաստանում Ռուսաստանի ուժային ներկայությունը, որը բաղկացած է նախկին ԽՍՀՄ-ի սահմանի երկայնքով Հայաստանի սահմանի պահպանությունն իրականացնող Ռուսաստանի Անվտանգության Դաշնային ծառայության սահմանապահ վարչության զորամասերից և Հայաստանում Ռուսաստանյան 102-րդ ռազմակայանից:

Հայաստանի համար անընդունելի է իր սահմանների պահպանության իրականացումը օտարերկրյա պետության սահմանապահ ուժերի կողմից, ուստի նա առաջնահերթ է համարում դրանց ստորաբաժանումների անհապաղ դուրս բերումը և սահմանի պահպանությունը հայկական կողմին հանձնումը:

Հայաստանը համարում է, որ իր տարածքում Ռուսաստանյան 102-րդ Ռազմակայանի պահպանման նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում վերանայման են ենթակա դրա գտնվելու պայմանները (այդ թվում՝ Ռազմակայանի պահպանման և գործունեության) ու ժամկետները, ինչպես նաև Ռազմակայանի նպատակները, խնդիրները, կազմը, կառուցվածքը, տեղակայման վայրերը, Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի հետ գործակցության հարցերը: Մասնավորապես՝ Հայաստանը ելնում է այն մտտեցումից, որ ներկա պայմաններում Ռազմակայանի կազմում ցամաքային ստորաբաժանումների առկայությունը նպատակահարմար չէ, ուստի նախընտրում է Ռազմակայանի կազմում տեսնել միայն ներկայիս համեմատությամբ ավելի մեծ ներուժ ունեցող ավիացիայի և ՀՕՊ-ի ստորաբաժանումներ, որպիսի կերպափոխումը տարածաշրջանում Ռուսաստանյան ռազմական ներկայությունը կվերածեր շատ ավելի մեծ գործոնի ի շահ երկու պետությունների:

Մինևույն ժամանակ, Հայաստանը պետք է հաշվի առնի, որ պատմության շրջադարձային պահերին կայունությունը կորցնող աշխարհում մյուս դերակատարների համեմատությամբ Ռուսաստանի տուրբուլենտությունը շատ ավելի մեծ ու անկանխատեսելի է լինում: Ուստի Ռուսաստանի հետ հարաբերությունների ասպարեզում Հայաստանը պետք է մշտապես պատրաստ լինի շրջադարձային զարգացումների և այլընտրանքային լուծումների:

8.2.2.2. Ամերկայի Միացյալ Նահանգներ

ԱՄՆ-ի հետ բազմաբնույթ համագործակցության զարգացումը Հայաստանի համար հատուկ նշանակություն ունի, քանի որ ԱՄՆ-ն առաջնային դեր ունի թե՛ միջազգային, թե՛ տարածաշրջանային գործընթացներում:

Մեծ մասամբ ԱՄՆ-ի հետ հարաբերություններով է պայմանավորված երկկողմ ձևաչափով Հայաստանի Հանրապետության համագործակցության զարգացումը ՆԱՏՕ-ի շրջանակներում:

Երկու երկրների միջև հարաբերությունների ներուժը լիարժեք կերպով չի իրացվում, քանի որ անցնող քսան տարիների ընթացքում ԱՄՆ-ը դրանք կառուցում է Հայաստանի հետ Ռուսաստանի գերակա դիրքով ու ի հաշիվ Հայաստանի ռազմավարական շահերի իրականացվող գործընկերության և Հայաստանի՝ ՀԱՊԿ-ի անդամ լինելու հանգամանքների հաշվառմամբ, ուստի հայաստանի հետ հարաբերությունները հիմնականում զետեղում է իր արտաքին քաղաքականության ռազմավարական օրակարգից դուրս, ինչը խիստ սահմանափակում է դրանց զարգացման հնարավորությունները:

Հայաստանի կողմից Ռուսաստանի հետ հարաբերությունների ձևաչափի և բովանդակության հավասարակշիռ կարգաբերումը և վերալետական կազմակերպություններին ու ռազմաքաղաքական դաշինքներին անդամակցելուց հրաժարվելու քաղաքական ուղեգծի որդեգրումը շտկում է ԱՄՆ-ի հետ հարաբերությունների հարացույցը և նոր հնարավորություններ է ստեղծում տարածաշրջանային և միջազգային մակարդակներում Հայաստանի շահերն իրացնելու համար:

Մինևույն ժամանակ, տարածաշրջանում ԱՄՆ-ի աշխարհառազմավարական դերի իրացումը չպետք է տեղի ունենա Հայաստանի ռազմավարական շահերի և հայաստանակենտրոնության սկզբունքի ստորադասման հաշվին:

8.2.2.3. Չինաստանի ժողովրդական Հանրապետություն

Չինաստանի ժողովրդական Հանրապետությունը վերջին երեք տասնամյակների ընթացքում տեղի ունեցած թռիչքային զարգացման շնորհիվ վերածվել է աշխարհառազմավարական նոր ուժային բևեռի: Զարգացման առկա տեմպերը պահպանելու պարագայում առաջիկա տասնամյակներում Չինաստանը կվերածվի ամենահզոր ուժային բևեռի, ինչը կհանգեցնի համաշխարհային մասշտաբով աշխարհաքաղաքական համակարգային փոփոխությունների:

Չինաստանն առանց շտապելու և մյուս ուժային կենտրոնների շահերի հետ լուրջ բախումներ ունենալու, սակայն հաստատուն կերպով վարում է նոր գործընկերներ ձեռք բերելու, իր ազդեցությունը հատկապես Եվրասիական ահռելի տարածքի վրա տարածելու ռազմավարություն: Իրանի հետ զարգացող հարաբերությունները միտում ունեն վերածվելու ռազմավարական գործընկերության, ինչը էապես կազդի Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանում անվտանգային համակարգի կառուցվածքի վրա՝ նվազեցնելով, մասնավերապես ԱՄՆ-ի, Թուրքիայի ու Իսրայելի դերը, դրա փոխարեն հզորացնելով Չինաստանի ու Իրանի ազդեցությունը, ինչպես նաև այդ անվտանգային համակարգի բազմազանեցմամբ տարածաշրջանի մյուս երկրների համար ձևավորելով իրենց դերի մեծացման նոր հնարավորություններ ու նախադրյալներ:

Հայաստանի հետ Չինաստանի հարաբերությունները ներկայումս սահմանափակ են, ինչն առաջին հերթին պայմանավորված է արտաքին հարաբերություններում Հայաստանի կաշկանդվածությամբ, ինչպես նաև փոքր տնտեսական ներուժով: Բավարար չեն նաև երկու երկրների միջև ռազմական ու ռազմատեխնիկական հարաբերությունների ձևաչափն ու ծավալները: Դրանք սահմանափակվում են Չինաստանում Հայաստանի համար ռազմական կադրերի պատրաստման ոչ մեծ ծավալի ծրագրերով, ինչպես նաև Հայաստանին հատկացվող խորհրդանշական ռազմատեխնիկական օգնությամբ:

Հայաստանն ապագայում իր արտաքին անվտանգության ռազմավարության մեջ Չինաստանին պետք է հատկացնի առաջնային տեղերից մեկը՝ այդ երկրի հետ կյանքի բոլոր, այդ թվում՝ ռազմական և ռազմատեխնիկական, ոլորտներում հարաբերությունների զարգացումը վերածելով իր հզորացման և տարածաշրջանային ռեալ գործոնի վերածման հիմնական հարթակներից մեկը: Չինաստանի հետ զարգացած հարաբերությունները կարող են վերածվել նաև այլ աշխարհառազմավարական ուժային կենտրոնների բացասական ազդեցությունը չեզոքացնելու ունիվերսալ ռեսուրսի:

8.2.2.4. Հնդկաստան

Հայաստանն առաջնային կարևորություն է տալիս զարգացման ահռելի ներուժ ունեցող Հնդկաստանի հետ հարաբերությունների ծավալմանն ու խորացմանը:

Ավանդաբար ռազմաքաղաքական դաշինքներ կազմելուց և ռազմաքաղաքական ազդեցության հաստատման չձգտելու քաղաքականություն վարող Հնդկաստանն իր աշխարհաքաղաքական դիրքի, մարդկային ներուժի, խոշոր և աճի բարձր տեմպեր ունեցող տնտեսության, միջուկային կարողության, զարգացման հեռանկարի շնորհիվ վերածվել է համաշխարհային և, հատկապես տարածաշրջանային հավասարակշռման գործոնի, ինչը ապահովում է նրա ուրույն աշխարհառազմավարական դերը համաշխարհային և տարածաշրջանային չափումներում:

Հայաստանի համար Հնդկաստանի հետ հարաբերությունների զարգացումն ու խորացումը կարևոր են ինչպես Հնդկաստանի աշխարհառազմավարական այս դերի, այնպես էլ տնտեսության, գիտության, կրթության և մշակույթի ոլորտներում նրա ներուժի և ձեռքբերումների հաշվառմամբ: Մասնավորապես՝ Հայաստանը ձգտում է համագործակցել Հնդկաստանի հետ տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում, ինչը հնարավորություն կընձեռի ոչ միայն պահպանել ու զարգացնել Հայաստանում առկա համապատասխան գիտական ներուժը, այլև գործնականում անսահմանափակ ծավալներով զարգացնել դրա կիրառման տեխնիկական և արտադրական կարողություններ՝ իր ապագա տնտեսության մեջ տվյալ ոլորտները վերածելով քարշակային ճյուղերի:

8.2.2.5. Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի մյուս պետություններ

Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի մյուս պետությունների, մասնավորապես՝ Ճապոնիայի, հարավային Կորեայի, Սինգապուրի հետ հարաբերությունների զարգացումն առաջին հերթին պայմանավորված է դրանց տնտեսական զարգացման փորձի ներբերման և նրանց հետ գիտատեխնիկական համագործակցության հեռանկարներով:

Հայաստանը շահագրգռված է այս տարածաշրջանի զարգացած պետությունների հետ փոխշահավետ հարաբերությունների ռեսուրսը ծառայեցնելու իր տնտեսության զարգացման, ինչպես նաև տարածաշրջանում իր արտաքին անվտանգության ռազմավարական գործիքարանի բազմազանեցման ու տարակարգման նպատակներին:

8.2.2.6. Մեծ Բրիտանիա

Մեծ Բրիտանիան աշխարհում, այդ թվում՝ Հայաստանը ներառող Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանում առանցքային դեր ունեցող պետություն է:

Այդ պետությունն աշխարհի մասշտաբով էական, հաճախ՝ որոշիչ, ազդեցություն ունի իր ներուժի հատկապես աշխարհաքաղաքական (որպես անգլոսաքսոնական գործոնի ձևավորման կենտրոն), ֆինանսատնտեսական (որպես համաշխարհային տնտեսության նյարդային կենտրոն), ինչպես նաև քաղաքակրթական (առաջին հերթին՝ որպես իր նախկին գաղութներից անգլիախոս երկրների մշակութային հայրենիք և ոչ անգլիախոսների քաղաքակրթական-մշակութային ինքնության ձևավորման էական գործոն, ինչպես նաև որպես ներկայումս գերիշխող արևմտյան քաղաքակրթության առանցքային օջախ) բաղադրիչների շնորհիվ:

Մեր տարածաշրջանում Մեծ Բրիտանիայի հայտնվելու պահից հայկական պետության անգոյության և հայկական գործոնի կայացած չլինելու, ինչպես նաև մի շարք այլ աշխարհաքաղաքական օբյեկտիվ պատճառներով առաջացել է հարաբերությունների ոչ հայանպաստ ձևաչափ՝ էական վնաս հասցնելով Հայաստանի և հայության ռազմավարական շահերին:

Տարածաշրջանում Մեծ Բրիտանիան ունի առանցքային, բանալիական ռազմավարական շահեր և դրանք իրացնելու մեծ հնարավորություններ, ինչի համար ունի նաև համապատասխան գործընկերների և միջնորդական դերակատարների կարիք:

Ուստի Հայաստանը և հայությունը պետք է ձգտեն հայկական գործոնի ինքնուրույնացման, նրա միջնորդական ու կամրջող դերի ձևավորման ու հզորացման շնորհիվ ոչ միայն հավասարակշռել նրա հետ հարաբերությունների ձևաչափը, այլև այն որոշակիորեն նպաստավոր դարձնել հայության ռազմավարական շահերի իրացման համար:

8.2.2.7. Ֆրանսիա

Աշխարհում, այդ թվում՝ Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանում, Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը որոշվում է նրա և այլ մեծ տերությունների ուժերի հարաբերակցության յուրօրինակ հաշվեկշռով, որտեղ նա, որպես կանոն, հանդես է գալիս առաջին մեծության ուժի/ուժերի հետ մրցակցային գործակցության ձևաչափով՝ հնարավորության դեպքում ձուգելով պահպանել իր յուրատիպությունն ու ինքնուրույնությունը՝ դրանով իսկ հավասարակշռելով նրանց ազդեցությունը:

Նշված ձևաչափում Ֆրանսիան հաճախ կատարում է նաև երկխոսություն ապահովող միջնորդի և կամրջի դեր, ինչպես նաև կատարում է Արևմուտքի ներկայացուցչի ու բանազնացի, երբեմն՝ նաև հաշտեցնողի գործառույթներ, որպես կանոն՝ ավանդաբար միջանկյալ դիրք զբաղեցնելով Հայաստանին և հայությանը վերաբերող հարցերում:

Ներկայումս Ֆրանսիան տնտեսական, ռազմական, գիտատեխնոլոգիական և մշակութային հզոր ներուժ ունի, ինչը ապահովում է նրա աշխարհաքաղաքական և քաղաքակրթական-մշակութային ծանրակշիռ ներուժն ու ազդեցությունը, այդ թվում՝ Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանում:

Հայաստանը և հայությունը պետք է ձգտեն հնարավորինս սերտացնել Ֆրանսիայի հետ հարաբերությունները ու դրանք օգտագործել ի նպաստ իրենց ռազմավարական շահերի՝ այդ նպատակով օգտվելով ինչպես Ֆրանսիայի հետ ավանդաբար ունեցած սերտ կապերի ու

ֆրանսիահայ մեծաքանակ գաղութի հնարավորություններից, այնպես էլ արդյունավետ կերպով համադրելով Ֆրանսիայի և Հայաստանի կամրջող-միջնորդական առաքելությունները:

8.2.2.8. Գերմանիայի Դաշնային Հանրապետություն

Գերմանիան, որպես ամբողջական պետություն կազմավորվելուց հետո՝ միջև երկրորդ համաշխարհային պատերազմը, պարբերաբար հանդես է եկել արդեն ձևավորված աշխարհաքաղաքական կառուցվածքի մեջ առաջատարի դերը ստանձնելու նկրտումներով, ինչը հանգեցրել է նրա ու մյուս աշխարհաքաղաքական ուժերի կոշտ մրցակցության ու հակամարտության:

Այս հակամարտությունը պայմանավորել է հարաբերությունների ոչ հայանպաստ ձևաչափ, որը շատ ծանր հետևանքներ է ունեցել հայության համար:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո էապես նվազեցվեցին ու սահմանափակվեցին Գերմանիայի աշխարհաքաղաքական նկրտումների հնարավորությունները:

Սակայն նույնիսկ այդ պայմաններում Գերմանիան մեծ հաջողությունների է հասել տնտեսության, գիտության, տեխնոլոգիաների և մի շարք այլ կարևոր բնագավառներում: Զգալի է նաև Գերմանիայի ռազմական ներուժը: Ներկայումս Գերմանիան Եվրոպայի առաջին տնտեսությունն ունեցող երկիրն է և առանցքային դեր է կատարում Եվրոպական Միության կյանքի շատ ասպարեզներում:

Գերմանիան նաև Եվրոպայում ու աշխարհում զգալի կշիռ ունեցող գերմանական քաղաքակրթության կենտրոնն է, ինչը նույնպես որոշակի կշիռ է տալիս նրան:

Նման պարամետրներ ունեցող երկիրն ապագայում մեծ հավանականությամբ կարող է համապատասխանաբար վերականգնել նաև իր աշխարհաքաղաքական դերը:

Հայաստանը պետք է ձգտի Գերմանիայի հետ սերտ հարաբերություններ զարգացնել տնտեսության, գիտության, կրթության և տեխնոլոգիաների, քաղաքակրթական-մշակութային երկխոսության ոլորտներում, ինչպես նաև պետական կառավարման, պաշտպանական, իրավական և դատաիրավապահ ոլորտների բարեփոխումների հարցերում:

Մինևույն ժամանակ՝ Հայաստանը պետք է պատրաստ լինի նաև Գերմանիայի աշխարհաքաղաքական ակտիվացման պարագայում նրա հետ հաստատելու հարաբերությունների համապատասխան հարացույց:

8.2.2.9. Եվրոպայի այլ պետություններ

Հայաստանի և Եվրոպայի այլ պետությունների միջև հարաբերություններն անհրաժեշտ մակարդակի զարգացած չեն: Մինչդեռ քաղաքակրթական-մշակութային հարազատությունը, ինչպես նաև տարածաշրջանային հարևանությունը ենթադրում են շատ ավելի խորը և սերտ հարաբերություններ կյանքի բոլոր ոլորտներում:

Եվրոպայի այլ պետությունները, այդ թվում՝ Իտալիան, Իսպանիան, Լեհաստանը, Բալկանյան և Սկանդինավյան երկրները, Հայաստանի և նրա տարածքն ընդգրկող Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանում չունեն ինքնուրույն և խիստ ընդգծված կենսական շահեր, ուստի կաշկանդված չեն դրանցով և ունեն Հայաստանի հետ փոխշահավետ հարաբերությունների զարգացման մեծ ներուժ:

Հայաստանը պետք է ձգտի առավելագույնս օգտվելու այդ ներուժից, ինչպես նաև այդ պետությունների հետ հարաբերություններն օգտագործի որպես Եվրոպական ընտանիքի և նրա առավել ազդեցիկ անդամների հետ փոխշահավետ գործակցության լրացուցիչ ռեսուրս:

Մինևույն ժամանակ՝ Եվրոպական այլ պետությունների հետ հարաբերություններ զարգացնելիս Հայաստանը պետք է հաշվի առնի նրանց ենթատարածաշրջանային (Արևմտյան, Կենտրոնական, Հյուսիսային, Հարավային Եվրոպաներ, ինչպես նաև Սկանդինավյան և Բալկանյան թերակղզիներ), քաղաքակրթական-մշակութային և այլ առանձնահատկությունները:

8.3. Հարաբերությունները տարածաշրջանի պետությունների հետ

8.3.1. Թուրքիա

Հայաստանը Թուրքիայի հետ հարաբերությունների զարգացումը դիտարկում է Հայոց պահանջատիրության՝ Հայ ժողովրդի տարածքային և հարակից իրավունքների առումով Թուրքիայի և այլ հաշվետու պետությունների նկատմամբ Հայաստանի և Հայության մոտեցումների համատեքստում:

Հայաստանը Թուրքիայի նկատմամբ վարում է պահանջատիրության և առկա պետական շահերի համադրմամբ մշակված և իրականացվող այնպիսի քաղաքականություն, որը բացառում է պահանջատիրության գերագույն նպատակի զիջումները հանուն այդ շահերի իրացման: Հայաստանը պատմական փորձի հաշվառմամբ նաև փաստում է, որ Թուրքիայի նկատմամբ հաշտվողական/պարտվողական քաղաքականությունը հակասում է ներկա հայկական պետության անվտանգությանը և շահերին:

Հատուկ ուշադրության է արժանի Օսմանյան կայսրությունում իրագործված Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի շուրջ ստեղծված իրավիճակը: Հայաստանի Հանրապետությունը, հետամուտ լինելով հայության օրինական պահանջին՝ վերականգնել Օսմանյան կայսրության բնիկ հայ ժողովրդի և նրա սերունդների նկատմամբ պատմական արդարությունը, մինևույն ժամանակ Եղեռնի ճանաչումը դիտում է Հայաստանի բնակչության նկատմամբ նոր ցեղասպանության հնարավորության բացառման համատեքստում, այսինքն՝ որպես Հայաստանի Հանրապետության բնակչության գոյության անվտանգության երաշխիքներից մեկը:

Մինչդեռ Թուրքիան դեռևս չի ճանաչում Հայոց ցեղասպանությունը և ձեռնարկում է բոլոր հնարավոր միջոցները այլ պետությունների կողմից ցեղասպանության ճանաչումը նախականելու կամ իր տեսակետից ճանաչման բացասական հետևանքները չեզոքացնելու ուղղությամբ: Հայ-թուրքական հարաբերությունները լարված են, որի հիմնապատճառը Թուրքիայի կողմից Հայաստանին որոշակի նախապայմանների առաջադրումն է և որպես դրա հետևանք՝ դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը, ինչը Հայաստանի ազգային անվտանգության համար ստեղծում է մի շարք սպառնալիքներ:

Թուրքիան նաև նպատակ է հետապնդում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը կարգավորել իր դաշնակից Ադրբեջանի շահերին համահունչ՝ դրանով պայմանավորելով նաև Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների հաստատումը: Այդ նպատակին հասնելու համար Թուրքիան շրջափակման է ենթարկում Հայաստանը:

Այս պայմաններում Հայաստանի և Թուրքիայի միջև առկա փաստացի սահմանների պաշտոնական ամրագրումը իրականում չի ապահովի ներկա հայկական պետության անվտանգությունը: Այնքան ժամանակ, քանի դեռ Թուրքիան չի ճանաչել հայոց ցեղասպանությունն ու հայրենագրվումը, և չի ընդունել այդ մեծագույն ոճիրները հատուցելու առումով իր կրած պատասխանատվությունը, շարունակում է մնալ որպես սպառնալիք այսօրվա Հայաստանի և նրա ազգաբնակչության անվտանգության համար: «Պետական շահերի» պատրվակով Թուրքիայի հետ հարաբերությունների բնականոնացումը, հետևաբար, մշտապես կամրագրի նրա սպառնալիությունը:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցը մնում է տարածաշրջանի կարևոր խնդիրներից մեկը, քանի որ այն անմիջականորեն ազդում է տարածաշրջանում կայունության հաստատման, տարածաշրջանային համագործակցության զարգացման վրա: Ուստի Հայաստանի Հանրապետությունը ձգտում է Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորմանը և հաստատակամորեն նպատակամղված է սկսելու նրա հետ հետևողական կառուցողական երկխոսությունը, ներառյալ՝ ուղղակի շփումները ինչպես պետական, այնպես էլ ոչ կառավարական կազմակերպությունների մակարդակով:

8.3.2. Վրաստան

Տարածաշրջանում առկա աշխարհաքաղաքական գործոնները և տարածաշրջանի աշխարհաքաղաքական դասավորությունը թելադրում են Հայաստանի ու Վրաստանի հարաբերությունների համագործակցային-փոխլրացնող, շատ հարցերում՝ անգամ տանդեմային ձևաչափ, որը պետք է բավարար չափով ներառի ինչպես մշակութային և տնտեսական-հաղորդակցային, այնպես էլ ռազմական համագործակցության բաղադրիչներ:

Սակայն Վրաստանը շարունակում է առաջնորդվել իր ծավալներին ու ներուժին չհամապատասխանող մեծապետական նկրտումներով, ինչը ռազմավարական հեռանկարում վտանգի է ենթարկում ոչ միայն նրա, այլև Հայաստանի կենսական շահերը: Վրաստանի պարագայում այս քաղաքականության կորստաբեր հետևանքն արդեն առկա է նրանից Աբխազիայի և Հարավային Օսեթիայի անջատման փաստով:

Ինչևէ, Վրաստանը Հայաստանի նկատմամբ վարում է քողարկված և անուղղակի հակամարտության ու մեկուսացման, իսկ Ջավախքի և ընդհանրապես՝ վիրահայության նկատմամբ՝ էթնիկ ձուլման, պատմամշակութային ժառանգության յուրացման ու էնդեմիկ բնակչության օջախներից արտամղման քաղաքականություն:

Տարածաշրջանում աշխարհաքաղաքական դասավորության և Վրաստանի վարած քաղաքականության ներկայիս պայմաններում Վրաստանի գործոնի հետ կապված հարցերում էապես մեծանում է Ջավախքի՝ որպես Հայաստանի և հայության շահերի իրացումը երաշխավորող հիմնական լծակի դերը, որը նա կրում է առաջին հերթին որպես թյուրքական շրթան խզող օղակ:

Մինևս ժամանակ՝ աշխարհաքաղաքական և այլ հանգամանքների բերումով հայկական պետության հետ Ջավախքի վերամիացման հարցն ընդգրկված չէ հայության մոտակա քաղաքական օրակարգում, ինչը, սակայն, ոչնչով չի կարող նվազեցնել վերամիացման սկզբունքային իրավունքը:

Ուստի վիրահայության և, առաջին հերթին՝ ջավախահայության ազգային ու մարդկային իրավունքների ու շահերի լիարժեք երաշխավորումը, Ջավախքի հայկականության պահպանումը,

նրա սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման ու այդ առումներով Հայաստանի հետ համարկման ապահովումը վերածվում է Վրաստանի հետ հարաբերություններում Հայաստանի ռազմավարական գերակայության:

Անկախ Վրաստանի վարած ներկայիս քաղաքականությունից, Հայաստանը մշտապես ձգտելու է իր և Վրաստանի ռազմավարական մոտեցումների համարկմանը, իսկ հնարավորության դեպքում՝ ռազմավարական գործընկերության ձևավորմանն ու զարգացմանը:

Այս առումով շրջադարձային կարող են լինել տարածաշրջանում անվտանգային նոր, դերերի ու դերակատարների ավելի մեծ բազմազանությունն ու բազմապիսիությունն ունեցող համակարգի առաջացմանը հանգեցնող առկա զարգացումները, ուժի Ասիա-Խաղաղօվկիանոսյան աշխարհաքաղաքական բևեռի հզորացման հետևանքով աշխարհում ուժի հաշվեկշռի փոփոխումը և դեպի արևելք դրա տեղաշարժը, որոնք նպաստելու են Հայաստանի կամրջող դերի էական մեծացմանը, ինչը որոշակիորեն, հնարավոր է՝ որակապես, փոփոխելու է Հայաստանի և Վրաստանի հարաբերությունների հարացույցը: Հայ և վրաց ժողովուրդների, Վրաստանի այլ բնիկ ժողովուրդների քաղաքակրթական-մշակութային ընդհանրությունները և դրանց զարգացման համար առկա ներուժն ու ռեսուրսները նման պայմաններում նպաստավոր նախադրյալներ են ստեղծում Հայաստանի հետ ռազմավարական գործակցությամբ հարավ-արևելյան, հնարավոր է նաև՝ հյուսիսային գործոնների ներքերմամբ Վրաստանի արևմտաբևեռ քաղաքականության հավասարակշռման և երկու երկրների փոխշահավետ հարաբերությունների զարգացմամբ նրանց տարածաշրջանային լուրջ դերակատարների վերածելու համար:

8.3.3. Իրանի Իսլամական Հանրապետություն

Հայաստանի հարաբերությունները Իրանի Իսլամական Հանրապետության հետ կարևորվում են տարածաշրջանում աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական՝ Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող նպաստավոր հաշվեկշռի պահպանման, Հայաստանի և հայկական գործոնի հզորացման նախադրյալների ապահովման, ինչպես նաև քաղաքակրթական-մշակութային ընդհանրությունների և հայկական բազմադարյա համայնքի հիմքի վրա փոխշահավետ ռազմավարական համագործակցության և զարգացման մեծ ու խոստումնալից հեռանկարի առումով:

Հայաստանը, գտնվելով քրիստոնեական և իսլամական քաղաքակրթությունների սահմանագծում, կարող է Արևմուտքի և Իրանի հետ իր համագործակցության զուգակցմամբ զգալի դերակատարություն ունենալ Իրան-Արևմուտք լարվածության մեղմացման առումով՝ դառնալով քաղաքակրթությունների երկխոսության և համակեցության կամուրջ:

Հայ-իրանական հարաբերությունների զարգացման համար հավելյալ նպաստավոր պայման է ստեղծում Իրանում հայկական համայնքի նկատմամբ ձևավորված ավանդական դրական վերաբերմունքը:

Իրանի Իսլամական Հանրապետության հետ Հայաստանի հարաբերությունների ահռելի ներուժի միայն չնչին մասն է իրացվում: Երկու երկրների միջև հարաբերությունների բովանդակությունը, ծավալն ու ձևաչափը էական վերանայման կարիք ունեն: Անհրաժեշտ է հարաբերությունները զարգացնել համալիր կերպով՝ հնարավորինս ընդլայնելով դրանց ոլորտները և մեծացնելով

ծավալները՝ երկու երկրների ռազմավարական շահերի սպասարկումն ու լիարժեք իրացումն ապահովելու համար:

Հայաստանը, հաշվի առնելով տարածաշրջանի, ինչպես նաև Իրանի բազմազանությունն ու փոփոխելիությունը, պետք է ձգտի Իրանի հետ գործընկերությունը զարգացնել իր ռազմավարական շահերի գերակայության հաշվառմամբ, հատկապես ուշադրություն դարձնելով հետևյալ ուղղություններին.

– Իրանի աշխարհառազմավարական ներուժի (որի համար աճման հավելյալ և դրական դինամիկայով ավելացող ռեսուրս է դառնում տարածաշրջանում տարեցտարի իր ազդեցությունը մեծացնող նոր աշխարհառազմավարական դերակատար Չինաստանի հետ Իրանի գործընկերությունը) հաշվառմամբ Հայաստանի անվտանգային համակարգի վերանայում և ըստ այդմ Իրանի հետ հարաբերությունների հաստատում,

– ներկայումս գոյություն ունեցող առևտրի ծավալների բազմապատիկ մեծացում, դրանց միակողմանիության հաղթահարում, տնտեսության բոլոր հնարավոր ճյուղերում համագործակցության հաստատում և զարգացում,

– ներկայումս էներգետիկայի և հաղորդակցային ուղիների զարգացման ոլորտներում գոյություն ունեցող ռազմավարական նշանակության ծրագրերի ընդլայնում և ավարտում՝ Հայաստանի էներգետիկ սնուցման և հաղորդակցային ապահովման լիարժեք այլընտրանքի ապահովման ձևաչափով ու ծավալներով, այդ թվում՝ դեպի Պարսից ծոց ելքի ապահովմամբ,

– գիտության, կրթության և մշակույթի ոլորտներում ռազմավարական ծրագրերի իրականացման մակարդակով սերտ համագործակցության ծավալում,

– Արևմուտքի և Իրանի ու իրանալեզու ժողովուրդների միջև Հայաստանի կամրջող դերի հաստատում,

– հայ, պարսիկ, տարածաշրջանի իրանալեզու և խորքային պատմաքաղաքակրթական ընդհանրություններ ունեցող այլ ժողովուրդների համախմբում և նրանց ընդհանուր գերակա շահերին համապատասխանող միասնական քաղաքակրթական-մշակութային տիրույթի ձևավորում ու զարգացում,

– Իրանի կամրջող դերի օգտագործմամբ իսլամական աշխարհի երկրների հետ կառուցողական հարաբերությունների հաստատում ու զարգացում և հայկական գործոնի կիրառմամբ Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանում խաղաղության, համերաշխության ու համագործակցության միտված նոր քաղաքակրթական-մշակութային միջավայրի ձևավորում,

– Իրանահայ համայնքի դերի համապատասխանեցում երկու երկրների միջև ռազմավարական համագործակցության պարամետրներին:

Հայաստանի Հանրապետությունը Իրանի հետ ռազմավարական համագործակցություն հաստատելու և զարգացնելու իր ռազմավարությունը կյանքի է կոչելու Հայաստանի և հայկական գործոնի մեծացմանը, նրա աշխարհաքաղաքական, ռազմական և տնտեսական պարամետրների բարելավմանը զուգընթաց:

8.3.4. Աղբբեջանի Հանրապետություն

Հայաստանի Հանրապետության և Աղբբեջանի Հանրապետության միջև ոչ մի հարաբերություն փաստացի հաստատված չէ, թեև նրանք հարևաններ են, ներգրավված են ՄԱԿ-ում և այլ միջազգային կազմակերպություններում, տարատեսակ ինտեգրման ծրագրերում ու ստանձնել են միմյանց հետ բարիդրացիական հարաբերություններ ձևավորելու բազում միջազգային պարտավորություններ:

Հայ-աղբբեջանական հարաբերությունների և դրանց հետագա զարգացման հիմնական խոչընդոտը հայության բնօրրան Հայկական բարձրավանդակի արևելյան հատվածի՝ ներառյալ ներկայիս Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքների, հայ ժողովրդի պատմական և հոգևոր-մշակութային ժառանգության տիրացման ու յուրացման բացահայտ ռազմատենչ և այլընտրանք չհանդուրժող աղբբեջանական քաղաքականությունն է, որը ակնհայտ կերպով միտված է նաև այդ տարածքներում բնակվող հայության ֆիզիկական բնաջնջման ու զանգվածային տեղահանության միջոցով ցեղասպանության ենթարկելուն:

Ստեղծված իրավիճակը էլ ավելի է բարդանում 1992 թվականին ՄԱԿ-ի կանոնադրության խախտմամբ Աղբբեջանական Հանրապետությանը ՄԱԿ-ի անդամ ընդունելու հանգամանքով: Նրա սահմանների հարցը մնում է չհստակեցված, քանի որ Աղբբեջանի Հանրապետությունն իրեն հռչակել է 1918-20 թվականներին գոյություն ունեցած, ընդամին՝ դարձյալ ոչ հստակ սահմաններով Աղբբեջանի Դեմոկրատական Հանրապետության ժառանգորդ, որի կազմում Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը երբևէ չեն եղել: ՄԱԿ-ի նման որոշման հետևանքով կոպիտ կերպով խախտվել են Խորհրդային Աղբբեջանը կազմավորած երկու հանրություններից մեկի՝ հայ ժողովրդի կենսական իրավունքները, ինչը հնարավորություն է ստեղծում այսուհետ ևս ոչ միայն յուրացնելու հայկական տարածքներն ու հայության պատմամշակութային ժառանգությունը, այլև շարունակելու կովկասյան թաթարների միջուկի շուրջ՝ այսպես կոչված աղբբեջանական ազգի մեջ բռնությամբ, ինչպես նաև այլ մեթոդներով ձուլել բնիկ ժողովուրդներին և իրագործել այդ «ազգի» քաղաքական վերնախավի ու տարածաշրջանի որոշ դերակատարների ծավալապաշտական նկրտումները: ՄԱԿ-ի այս որոշումը միջազգային իրավունքի տեսակետից իրավաչափ չէ նաև այն պատճառով, որ, մասնավորապես՝ Հայաստանի և Աղբբեջանի սահմաններն առ այսօր միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի հիման չեն համաձայնեցվել ու չեն ճանաչվել, իսկ նրանց սահմաններին վերաբերող խորհրդային շրջանի բոլոր իրավական ակտերը հակասում են միջազգային իրավունքին և չեն բխում դրանցից, քանի որ այս երկրների տարածքները նախ բռնագավթվել, ապա բռնակցվել են Խորհրդային Ռուսաստանին:

Նման իրավիճակում հայության կենսական շահերն ու իրավունքներն ապահովելու միակ տարբերակը մնում է Հայաստանի Հանրապետության կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության ճանաչումը և երկու երկրներում միավորման հանրաքվեի անցկացմամբ հիմնախնդրի վերջնական ու անշրջելի լուծումը:

Հայաստանը կարևորում է ԵԱՀԿ Մինսկի խմբի ներգրավումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հանրաքվեի միջոցով Հայաստանի Հանրապետությանը վերամիավորման և տարածաշրջանում հետագա կայունության ապահովման գործընթացում:

Այդպիսի լուծումից հետո Հայաստանը հետամուտ է լինելու հայության անօտարելի իրավունքների իրացման համատեքստում՝ ներկայիս ԼՂՀ սահմաններից դուրս, միջազգային

իրավունքի հանրաճանաչ սկզբունքերին ու նորմերին համապատասխան ներկայիս ադրբեջանական պետության հետ իր սահմանները ճշգրտելու հարցին:

Արցախյան հիմնախնդրի նմանօրինակ լուծումից հետո Հայաստանը ձգտելու է տարածաշրջանային համագործակցության ու զարգացման սկզբնավորմանը, որը ներառում է ընդհանուր տնտեսական ծրագրերի իրականացումը, ճանապարհատրանսպորտային, բնապահպանական և այլ ասպարեզներում համագործակցությունը: Որոշակի կապերի հաստատումը կարող է ապահովել այն շփման դաշտը, որի շնորհիվ հնարավոր կդառնա երկու երկրների միջև փոխվստահության մթնոլորտի ձևավորումը, ինչն էլ տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատման վճռորոշ նախադրյալն է:

Մինևույն ժամանակ, հաշվի առնելով տարածաշրջանում տեղի ունեցող խորքային գործընթացները, որոնց հիմնական միտումը ինքնորոշումն է ըստ կրոնական և էթնիկ սկզբունքների, Հայաստանը պետք է պատրաստ լինի Ադրբեջանի Հանրապետության տարածքում ճնշված ժողովուրդների ինքնորոշման դրսևորումներին և դրանց հետ կապված հնարավոր զարգացումներին: Դրանք կարող են ապակայունացնել Ադրբեջանի ներքին իրադրությունը, հանգեցնել նրա տարածքում անջատողական միավորների, հնարավոր է՝ ինքնավարությունների առաջացմանը, անգամ՝ Ադրբեջանի տրոհմանը և այդ տարածքում նոր պետությունների առաջացմանը: Նման զարգացումները ոչ միայն սկզբնական շրջանում հղի են Ադրբեջանի կողմից իր ամբողջականությունը պահպանելու նպատակով որպես համախմբման միջոց Հայաստանի նկատմամբ զինված հարձակում ձեռնարկելու արկածախնդրության վտանգով, այլև տարածաշրջանում շահեր ունեցող ուժերի ազդեցության ուժգնացմամբ և հնարավոր ներթափանցմամբ:

8.3.4.1. Հայկական գաղթօջախներ ունեցող իսլամական պետություններ

Հայաստանի Հանրապետությունն իր արտաքին քաղաքականության մեջ հաշվի է առնում այն փաստը, որ Հայաստանը և հայ ժողովուրդը պատմականորեն և աշխարհագրական առումով շփումների մեջ են եղել և գոյակցել Մեծ Մերձավոր Արևելքի՝ հայկական գաղթօջախներ ունեցող իսլամական երկրների ու ժողովուրդների հետ: Այդ երկրներում ապաստան են գտել ցեղասպանությունը վերապրած հայ ժողովրդի զանգվածներ և մինչ օրս գոյություն ունեն հայ համայնքներ, որոնց հնարավորություն է տրված պահպանելու իրենց ազգային հոգևոր ու մշակութային ինքնությունը: Ուստի Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի համար կարևոր է շարունակել այդ երկրների հետ ավանդական բարեկամական հարաբերությունները՝ դրանք խարսխելով փոխադարձ հարգանքի վրա:

Ներկայումս այդ երկրների մեծ մասում տեղի ունեցող խորքային գործընթացները որոշակի ռեալ սպառնալիք են ստեղծում տեղի հայկական համայնքների ֆիզիկական անվտանգության համար: Այս պայմաններում Հայաստանն իր հավասարակշիռ քաղաքականությամբ պետք է ձգտի չեզոքացնել հայությանն սպառնացող վտանգները, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կազմակերպել հայերի ներքաղթն ու վերաբնակեցումը Հայաստանում՝ առաջնությունը տալով Արցախի ազատագրված տարածքներին:

8.3.4.2. Իսրայել

Իսրայելին իր ծանրակշիռ աշխարհառազմավարական ներուժով էական դեր ունի Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանի անվտանգային միջավայրում:

Հայաստանի և Իսրայելի միջև հարաբերությունները զարգացած չեն: Դրանք սահմանափակվում են գիտության, մշակույթի և առողջապահության ոլորտի մասնավոր միջոցառումներով: Իսրայելը չի ճանաչում հայոց ցեղասպանության փաստը, միևնույն ժամանակ՝ ռազմավարական տրամաչափի գործակցություն է զարգացնում Թուրքիայի ու Ադրբեջանի հետ:

Այս հանգամանքերի հաշվառմամբ՝ Հայաստանը պետք է ձգտի հայկական գործոնի հզորացման և տարածաշրջանում շահեր հետապնդող ուժերի հարաբերակցության ու հարաբերությունների համատեքստում դրա արդյունավետ գործադրման միջոցով ձևավորելու այնպիսի բազմաշերտ և բազմագործոն անվտանգային միջավայր, որը բարենպաստ կլինի Հայաստանի արտաքին ռազմավարական շահերի հնարավորինս արդյունավետ իրացման համար: